Ազգիս Վեհափառ Հայրապետը յունուարի 12-ից գրած սրբատառ կոնդակով արքեպիսկոպոսութեան բարձր աստիճանն է շնորհել Գերապատիւ պատրիարք Սրբազան Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանին:

—

## Գ. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Պարսկահայոց և Հնդկահայոց եկեղեցական կեանքից խմբագրութիւնս նոր տեղեկութիւններ դեռ չէ ստացել, բայց յուսալի է, որ Սրբազան առաջնորդների աջակցութեամբ այսուհետև յաճախ առիթ պէտք է ունենայ տեղեկութիւններ տալու մեր վտարանդի եղբայրների կեանքից:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ·

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1836 յանուն Ստեփան վարդապետի Տէր Գրիգորեան, որով կարգէ զնա ի վանահայրութիւն Ս. Ստեփաննոս Նախավկայի վանուց որ ի Դարաշամբ: 24 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1847 յանուն Բենիկ արեղայի, որով կարգէ զնա Թեմական տեսուչ Երևանայ, ըստ միջնորդութեան Գեր. Կիւրեղ եպիսկոպոսի, փոխանորդի Թեմակալին Երևանայ, հոկտ. 26.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1844 յանուն Վահան քահանայի Տէր Գրիգորեան գործակալի Մեղրւոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Կիւրեղ Եպիսկոպոսի: 26 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1845 յանուն Գէորգ քահանայի Տէր Գրիգորեան՝ գործակալի կողմանցն Սիսիանու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Կիւրեղ Եպիսկոպոսի: 26 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1846 յանուն Սարգիս քահանայի Սահակեան՝ անդամոյ Հոգևոր Կառավարութեան Ցաթեւու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Սրբազան Կիւրեղ Եպիսկոպոսի: 26 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1854 յանուն Սարգիս քահանայի Աղաբեան՝ որ ի Նոր Բայազետ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. փոխ-թեմակալին Երևանայ Կիւրեղ Եպիսկոպոսի: 26 հոկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1869 յանուն Պետրոս վարդապետի Այվազեան, որով կարգէ զնա ի փոխանորդութիւն վիճակին Ալաշկերտի: 1 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1957 յանուն Նիկողայոս քահանայի Եալօյեանց, գործակալի կողմանցն Մեծ-Պարնոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ վկայութեան արժ. Աշոտ վարդապետի և ըստ միջնորդութեան Գեր. Կիւրեղ Եպիսկոպոսի: 14 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 2005 յանուն Թովմա արեղայի Բաղդասարեան, որով կարգէ զնա քարոզիչ Օշական գեղջ: 17 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 2013 յանուն Պետրոս քահանայի Զօլախեան ի Նոր Նախիջևան, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան վիճակային Կոնսիստորիային Բեսարաբիոյ: 18 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2021 յանուն Գրիգոր քահանայի Տէր Գրիգորեան Վաղարշապատու, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ ի նշան գոհունակութեան։ 20 նոյ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2022 յանուն Աստուածատուր քահանայի՝ գործակալին Վաղարշապատու, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ի նշան գոհունակութեան։ 20 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2023 յանուն Թադէոս քահանայի Մելիք Ղազարեան՝ գործակալին Սարտարապատու, որով շնորհէ նմա զպատիւ աւագ քահանայութեան, ըստ միջնորդութեան Գեր. Կիւրեղ Եպիսկոպոսի՝ փոխանորդի թեմակալին Երևանայ։ 20 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2033 յանուն հոգևոր կառավարութեան Աղէքսանդրապօլու, որով պատուիրէ հասուցանել մատենադարան - ընթերցարանին զմի տասներորդ մասն արդեանց Եօթն-վիրաց պատկերին։ 22 նոյեմ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2098 յանուն անդամոյ վիճակային կոնսիստորիային Վրաստանի և Իմերէթի՝ Գաբրիել քահանայի տէր Գաբրիէլեան, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի թեմին Գէորգ Եպիսկոպոսի Սուրէնեան։ 6 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2106 յանուն Սարգիս քահանայի Իկիտեան որ ի Տփխիս, որով շնորհէ նմա զպատիւ աւագ քահանայութեան, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի թեմին Վրաստանի և Իմերէթի։ 8 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2109 յանուն Ներսէս աւագ քահանայի Արովեան՝ որ ի Տփխիս, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ զգլխարկն Թաւշեայ կամիլաւկա, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի թեմին։ 8 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2114 յանուն Խաչիկ արեղայի Դաւեան, որում շնորհէ լանջախաչ ականակուռ և նշանակէ զնա այցելու հովիւ ժողովրդեան Մակու քաղաքի և շրջակայ գիւղօրէից։ 9 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2149 յանուն Յարութիւն քահանայի Սարգսեան ի Բալախանա գեղջ Շամխուոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ ըզգլխարկն Թաւշեայ կամիլաւկա, ըստ միջնորդութեան Գեր. Մեսրովբ Արքեպիսկոպոսի։ 16 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2150 յանուն Սահակ քահանայի Տէր Մինասեան ի Գօրի, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխ «կամիլաւկա», ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին Տփխեաց Գէորգ Եպիսկոպոսի Սուրէնեան։ 16 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2151 յանուն Թադէոս քահանայի, պաշտօնէի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ Աղէքսանդրիոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի ի կուրծս խաչ ոսկեզօծ, ի նշան գոհունակութեան։ 16 դեկտ.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2152 յանուն Ներսէս քահանայի Կիւլնազարեան յԱշտարակ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ։ 16 դեկտ.